ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

§ 11. ՀԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԸ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԸ

1

Հնդկաստանում աշխարհի և մարդկանց ստեղծողը համարվում էր Բրահմա աստվածը: Այդ պատճառով հնդիկ քրմերին անվանում էին բրահմաներ: Ըստ բրահմաների ուսմունքի, աստված մարդկանց բաժանել է տարբեր վառնաների՝ ***իրենց իրավունքներով ու պարտականություններով տարբերվող*** դասերի: Մարդն իր ամբողջ կյանքում մնում է այն վառնայում, որտեղ ծնվել է:

Ըստ բրահմաների ուսմունքի՝ աստված ստեղծել է օրենքներ, որոնք սահմանում են, թե տարբեր վառնայի մարդիկ ինչով պետք է զբաղվեն, ինչպես պահեն իրենց: Այդ օրենքները խախտողները ենթարկվում էին դաժան, տանջալից պատիժների:

I և II վառնաները կազմված էին արիացիներից: III վառնան խառը ծագում ուներ: IV վառնան ամենից ստորադասն էր՝ կազմված հպատակեցված տեղական բնակչությունից: Նրանք կատարում էին ծանր և ոչ պատվաբեր աշխատանքներ:

Այս վառնայում կար անձեռնմխելի մարդկանց մի խավ, որոնց դիպչելը համարվում էր սրբապղծություն: Անձեռնմխելիները պարտավոր էին կատարել ամենակեղտոտ ու ամենատհաճ պարտականությունները, օրինակ՝ սատկած անասունների դիակները մաշկելը, աղտեղությունները մաքրելը և այլն:

Վառնաների միջև ամուսնություններն արգելված էին: Վառնաները իրենց հերթին բաժանվում էին կաստաների:

Հնդիկները ընտելացրել էին փղերին: Նրանք վիթխարի կենդանիներին ստիպում էին ենթարկվել ու ծառայել մարդկանց, արմատախիլ անել ծառերը, տեղափոխել մարդկանց ու բեռներ: Փղերին սովորեցրել էին մասնակցել կռիվներին, ներխուժել հակառակորդի շարքերը և տրորել թշնամու զինվորներին:

3

Ցին Շի Հուանդիի 10 հազար կավե զինվորների բանակը, որը թաղվել է նրա դամբարանում կայսրին հետմահու կյանքում պաշտպանելու համար:



4

Հան կայսրությունը հզորության հասավ ***ՈՒ–դի (Ք.ծ.ա. 127–84)*** կայսեր օրոք: Չինաստանի սահմաններն ընդարձակվեցին մինչև Տիբեթ: Չինական բանակները առևտրական ուղի բացեցին դեպի Միջին Ասիա և Իրան: Սա նշանավոր ***Մեկաքսի ճանապարհն*** էր, որի մի ճյուղն անցնում էր Հայաստանով: Այս ճանապարհով Առաջավոր Ասիա և Եվրոպա էին արտահանվում չինական մետաքսը, ճենապակյա իրեր և այլն:

5 Հնդկական ճարտարապետության և քանդակագործության նմուշներ

6

Շերամի բոժոժները երկար ժամանակ Չինաստանում օգտագործ-վում էին կանանց մազերը զարդարելու համար: Ըստ ավանդության, մի անգամ սպասուհու ձեռքից պատահաբար մի քանի բոժոժ ընկնում է տաք ջրով լի թասի մեջ: Տաքությունից բոժոժի թելերը բացվում են: Կայսրուհին դա տեսնելով՝ կարգադրում է այդ թելերից կտոր գործել: Դա մետաքսի առաջին կտորն էր, որն ամպի պես թեթև էր, նուրբ, բայց շատ ամուր: